Պարույր Սևակ

Անվերնագիր 20

Թե ողջն այս էր նույնիսկ՝ լոկ մի գիշեր անցած,
Այգու չափարն այն հին, այն կարկաչող առուն,
Ու մեր ստվերները մթնում արձանացած,-
Ես քեզանով դարձյա՛լ այնպես լի եմ, հարո՛ւստ,
Թե ողջն այս էր նույնիսկ՝ ողջը քի՛չ չէր, անգի՛ն.
Այնտեղ տաք շշուկից ձմռան ձյունն էր հալչում,
Ասես մեզ էր լսում կիսաքնած այգին,
Մինչ մեր խոսքերի տեղ աղբյուրն էր կարկաչում:
Թե ողջն այս էր նույնիսկ՝ կյանքը քաղցր է հավետ
Եվ ապրելու համար արժե մեռնե՛լ անգամ,
Միայն թե դու կրկին կախարդես ու թովես,
Միայն թե քեզ նորից իմ մատներով զգամ:
Միայն թե այն կավե չափարը շեն մնա,
Այգին ու դեղձենին ծաղիկ հագնեն նորից,
Եվ դեղձենու ծաղկի առէջների վրա
Մնա թեկո՛ւզ մի շունչ քո տաք շշուկներից:

21.XII.1946թ.
Երևան